

ԼԻԲԱՆԱՆ - Ե. ՄԻՈՒԹԻՒՆ ԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Երոսական Միութեան արտաքին գործոց յարաբերութիւններու վարչութեան միջին արեւելեան հարցերով վարչող նոր պատասխանատու Քրիսթիան Լը Ֆլէր երէկ այցելեց վարչապետ Ռաֆիք Հարիրիի եւ արտաքին գործոց նախարար Մահմուտ Համնուտի:

Վարչապետին հետ տեսակցելէ ետք Լը Ֆլէր յայտնեց, որ հանդիպումին ընթացքին քննարկուեցան Լիբանան - Ե. Միութիւն գործակցութեան համաձայնագրի առաւելութիւնները եւ անոր ճշգրիտ գործադրութիւնը, յառաջիկայ Երկուշաբթի օր Լիբանանի մէջ ստորագրուելէ ետք: Լը Ֆլէր համաձայնագիրը նկատեց կենսական, երկկողմանի իսկական յարաբերութեան մը մշակման համար՝ պանապան մարզերէ ներս, ինչպէս՝ տնտեսական, վարչական եւ օրինական բարեկարգման, կենսոլորտի, դատական, ներքին հարցերու, գաղթականութեան, ինչպէս նաեւ Լիբանան - Ե. Միութիւն քաղաքական երկխօսութեան խորացման, Լիբանանի, Երոսայի եւ Միջին Արեւելքի իրադարձութիւններուն շուրջ:

Լը Ֆլէր Հարիրիի հետ հանդիպումը նկատեց իրական եւ շեշտեց, որ Ե. Միութիւնը պիտի շարունակէ օժանդակել Լիբանանի պետութեան, որ իր կարելին կ'ընէ յառաջդիմելու եւ բարգաւաճելու:

Մ. Համնուտի հետ տեսակցութեան ընթացքին ներկայ էին արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղար Մոհամէտ Իսա, քաղաքական հարցերու պատասխանատու Նաժի Ապի Ասաի եւ Ե. Միութեան դեսպան Փաթրիք Ռընօ:

Հանդիպումէն ետք, Լը Ֆլէր յայտնեց, որ նախարար Համնուտի հետ արժարժաւ են արտաքին քաղաքականութեան առնչուած հարցեր, ինչպէս նաեւ Միջին Արեւելքի մէջ արձանագրուող վարձագումները: Ան շեշտեց, որ երկու կողմերն ալ անհրաժեշտ նկատած են միջին արեւելեան տագնապը լուծել խաղաղօրէն:

Տնտեսութեան նախարար Պասէլ Ֆլէյխանի հետ հանդիպումի մասին հարցունքի մը պատասխանելով՝ Լը Ֆլէր ըսաւ. «Տակաւին կանուխ է»:

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻԻ ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ ունեցաւ շարք մը հանդիպումներ, որոնց ընթացքին քննարկեց պանապան հարցեր:

Հարիրի ընդունեց Սուսան Համաւտ Հումայտին, որուն հետ քննարկեց Լիբանանի մէջ ներդրումները քաջալերելու հետաճկարները: Հումայտի յայտնեց, որ մօտ օրէն պիտի սկսի Սուրիոյ զինուորի մէջ իր ծրագրերը իրականացնել՝ կատարելով ներդրումներ:

Հարիրիի այցելեց Ֆրանսայի մէջ վեհաժողովներու պալատի ընդհանուր տնօրէն Վերոնիք Տոշանթի-րաք Լամէյիալ: Հանդիպումին ներկայ էին Պէյրութի մէջ նոյն հաստատութեան ընդհանուր տնօրէն Ռոժէ Օրսէ:

Վարչապետը ընդունեց դրամատուներու միութեան նախագահ Ժոզէֆ Թարապէլը, որուն հետ քննարկեց յարմարութիւններուն առնչուած հարցեր:



Վարչապետ Հարիրի կ'ընդունի Լը Ֆլէրը

կեց յարմարութիւններուն առնչուած հարցեր:

Հարիրիի այցելեց նաեւ Լիբանանի մէջ Հարաւային Ափրիկէի դեսպան Ֆրանք Մալալոյ:

Միւս կողմէ, վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ ցաւակցական հեռագիր մը յղեց Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատի նախկին նախագահ Հաֆէզ Ասատի մահուան երկրորդ տարելիցին առիթով:

Հարիրի նախագահ Պաշշար Ասատի մաղ-

թեց յաջողութիւն, կամք եւ ուժ՝ շարունակելու համարապային նպատակներու հետապնդումը եւ վերջապէս օր մը կարենալ պատագրելու համար Կոլմաննու Մապա-րէի Շրպասան, որոնք գրաւուած կրման խորայնեան բանակին կողմէ:

Վարչապետ Հարիրի նաեւ նոյն առիթով ցաւակցական հեռագիր մը յղեց սուրիացի իր պաշտօնակիցին՝ Մոհամէտ Մուսաֆա Միրոյի:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՆԱԿԱԳԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԸ ԵԿԱՏԷ ...

ՆԱԿԱԳԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԸ ԵԿԱՏԷ ...

ՆԱԿԱԳԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԸ ԵԿԱՏԷ ...

ՆԱԿԱԳԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԸ ԵԿԱՏԷ ...

ՆԱԿԱԳԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԸ ԵԿԱՏԷ ...

ՆԱԿԱԳԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԸ ԵԿԱՏԷ ...

ՆԱԿԱԳԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԸ ԵԿԱՏԷ ...

ՆԱԿԱԳԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԸ ԵԿԱՏԷ ...

ՆԱԿԱԳԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԸ ԵԿԱՏԷ ...

ՆԱԿԱԳԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԸ ԵԿԱՏԷ ...

ՆԱԿԱԳԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԸ ԵԿԱՏԷ ...

ՆԱԿԱԳԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԸ ԵԿԱՏԷ ...

ՆԱԿԱԳԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԸ ԵԿԱՏԷ ...

ՆԱԿԱԳԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԸ ԵԿԱՏԷ ...

ՆԱԿԱԳԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԸ ԵԿԱՏԷ ...

ՆԱԿԱԳԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԸ ԵԿԱՏԷ ...

ՆԱԿԱԳԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԸ ԵԿԱՏԷ ...

ՆԱԿԱԳԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԸ ԵԿԱՏԷ ...

Ս. ԱԳՆԷՍ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ՎԱՐՄԱՐԱՆ
 ՀՏԵՌ. 261139

2002 - 2003 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տնօրէնութիւնը բաց կը յայտարարէ 2002 - 2003 դպրոցական տարեշրջանի արձանագրութիւնները, Երեքշաբթի, 11 Յունիս 2002-ին սկսեալ ամէն օր առաւօտեան ժամը 8:30-էն մինչեւ ժամը 12:30, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

Դիւրացնելու համար վերամուտի աշխատանքները, ներկայ աշակերտները պարտին իրենց արձանագրութիւնները կատարել մինչեւ 28 Յունիս:

Նորեկ աշակերտները պարտին իրենց հետ բերել ինքնութեան թուղթին լուսապատճեն (կամ ինքնաճ քայտ), պատուաստներու եւ առողջ վիճակի վկայագիր եւ 5 լուսանկար:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՄԱՀԱԶԴ

- Տիկին Վեհանոյ Ալպալիբեան
- Տէր եւ տիկին Վարուժան Ալպալիբեան
- Տիկին Անահիտ Սարգիսեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Նազատուր Նազատուրեան
- Տիկին Արշալույ Տէյրմէնճեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Նազարէթ Գարբիշեան
- Տէր եւ տիկին Արշակ Ներսէսեան եւ զաւակունք
- Ալպալիբեան ընտանիք
- Սարգիսեան ընտանիք
- Նազատուրեան ընտանիք
- Տէյրմէնճեան ընտանիք
- Նաճարեան ընտանիք
- Ներսէսեան ընտանիք
- Էքմէճեան ընտանիք
- Պատիկեան ընտանիք
- Անտոնեան ընտանիք
- Սազալեան ընտանիք
- Վարդանեան ընտանիք
- Թերզեան ընտանիք
- Փոքրաճեան ընտանիք
- Գոճաղլեանեան ընտանիք
- Քէօսեան ընտանիք
- Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց զաւակին, եղբոր եւ հարազատին՝

ՀՐԱՉ ԱՆԱԳԻԹԵԱՆԻ
 (Ծնեալ՝ 1950-ին)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 9 Յունիս 2002-ին, յետ երկարատեւ հիւանդութեան:

Թուրք-արեւելեան արարողութիւնը կատարուեցաւ Երեւոյշաբթի, 10 Յունիս 2002-ին, կէսօրէ ետք ժամը 4:00-ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ Հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համնուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Թրատ քող, Երեքշաբթի 11, Չորեքշաբթի 12 եւ Հինգշաբթի 13 Յունիսին:
- Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կատարել ԼՕԽի «Արաքսի Պուրջուրեան» ընկերութեան կեդրոնին:

ՎԱՐՉՈՒ ՎԱՍ ԾԱՆՈՒ ԶԱԼԷ

• 65 քառ. մէթր, «Sawary» resort, Պաթրուրի մէջ, հեռ. 03 - 883083:

ԺՈՍՊԼԱԹ - ՇԵՅԽ ՆԱՍՐԱԼԼԱ ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընկերվար Յառաջդիմական Կուսակցութեան ղեկավար Ուալիտ Ժոնպալաթ երէկ այցելեց Հրպալայի ընդհանուր քարտուղար շէյխ Հասան Նասրալլայի:

Հանդիպումէն ետք Ժոնպալաթ ըսաւ, որ քննարկած են ընդհանուր վիճակի հաւանական վարձագումներն ու ներքին բեմը ամրապնդելու անհրաժեշտութիւնը:

Հարցումի մը պատասխանելով՝ Ժոնպալաթ ըսաւ, որ ընդդիմութեան կարգ մը կողմերուն հետ իր յարաբերութիւնները լաւ է եւ պէտք է վարձագնէ պանձ մեկնելով ներքին միութիւնը ամրապնդելու, Սուրիոյ հետ ամուր կապերու եւ դիմադրութիւնը պաշտպանելու հիմերուն վրայ:

Ընդդիմադիրներու կողմէ իրեն ուղղուած քննադատութիւններուն մասին հարցումի մը պատասխանելով՝ Ժոնպալաթ ըսաւ, որ իր հօրը օրերուն, յիսունական տարիներէն Մուխթարան Լեռնայի շրջանի նեղ ծիւղէն դուրս գալով Ժամալ Ապտէլ Նասրի, Հաֆէզ Ասատի եւ պաղեստինեան դիմադրութեան հետ համարաբական տարողութիւն ստացած է եւ այս աւանդական դիմագիծը չի փոխուիր, իսկ այսօր Սուրիա, Լիբանանի եւ ուրիշներու հետ ճնշումներու կ'ենթարկուի եւ այս պայմաններուն տակ Մուխթարա անբաժանելի մէկ մասը կը մնայ այս ուղեգիծին հետեւողներու դաշինքին:

Իր քրիստոնէայ դաշնակիցներուն հետ կապերը խզելու հաւանականութեան մասին՝ Ժոնպալաթ նշեց, որ Լեռնայի շրջանի քրիստոնէաներն էին որ 19-րդ դարուն արաբականութեան գաղափարախօսութիւնը տարածեցին արաբական աշխարհին մէջ եւ սխալ է բոլոր քրիստոնէաներուն նկատմամբ արաբականութեան դէմ ըլլալու նախապաշարունք ունենալ:

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԿԸ ՏԻՐԷ ՄՐՅԱԿՅՈՒԹԻՒՆ ՄԸ

ԿԸՍԵ ՎԵՏՈՎԻՆ



Համնուտ կ'ընդունի Վետովիճը եւ անոր ընկերացող պատուիրակութիւնը

Ռուսիոյ նախագահի Միջին Արեւելքի խաղաղութեան հարցերու յատուկ պատուիրակ Անտոյէլ Վէտովին երէկ ժամանեց Պէյրութ եւ տեսակցութիւններ ունեցաւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի եւ արտաքին գործոց նախարար Մահմուտ Համնուտի հետ:

Վարչապետ Ռաֆիք Հարիրիի հետ տեսակցելէ ետք Վէտովին ըսաւ. «Քննարկեցինք Միջին Արեւելքի իրավիճակն ու անոր բաղադրական լուծումի հետեւողները, որոնք կը հիմնուին Մատրիտի խորհրդաժողովին հաստատուած սկզբունքներուն եւ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի որոշումներուն վրայ»:

Համնուտի հետ տեսակցելէ ետք Վէտովին ըսաւ, որ Միջին Արեւելքի վիճակը «խորհրդաժողովի է եւ մրցակցութիւն կայ վարչապետութեանց այլքին եւ քաղաքական լուծումի մը հասնելու ճիգերուն միջեւ»:

«Ռուսի գործածութիւնը լուծում չի բերեր, այլ ապահովական, քաղաքական եւ տնտեսական հարցերը զուգահեռաբար լուծող աշխատանքը, որուն շրջագիծն է միջազգային խորհրդաժողովը, որ պէտք է գումարուի այս ամառ», ըսաւ ան:

Վէտովին նշեց, որ այս ժողովին հիմերը պէտք է ըլլան Մատրիտի խորհրդաժողովին սկզբունքները, ՄԱԿի հին եւ նոր որոշումները եւ խաղաղութեան արաբական նախաձեռնութիւնը: «Լուծումը ամբողջական պէտք է ըլլայ հետեւաբար լուծումը եւ անոր համար գումարուող ժողովը պէտք է ընդգրկեն եւ անոնց մասնակից պէտք է ըլլան այս տագնապին հետ առնչութիւն ունեցող բոլոր երկիրները, որոնց շարքին են ընկալանաբար Լիբանանն ու Սուրիան», ըսաւ ան:

«Միջազգային ժողով մը գումարելու միջազգային խորհրդակցութիւնները կը շարունակուին՝ հասնելու համար բոլորին ընդունելի տարագի մը, եւ այդ ժողովը լաւագոյն պէտք է պատրաստուի, որպէսզի մտնուող պատահար մը չգառնայ հետագային», եզրափակեց ան:

ԱԶՍԱՍՄԱՐԱԿՈՒՄԸ
ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԵՎՈՅ (ՄԷՋԼԻՍ)

Ճոխ յայտագիր եւ համադրած ճաշ, տեղի կ'ունենայ Ուրբաթ, 21 Յունիս 2002-ին, երեկոյան ժամը 9:00-էն սկսեալ «Ազատամարտ» ակումբի Չուկատարեան սրահին մէջ:

ՍՍԿ՝ 10 ՏՈՒՐ

ՄԻՇԵԼ ՄԵՐԵՆ ՆԱՄԱԿ ՄԸ՝ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Թեկնածու Միրնա Մերի լիազորութեամբ, երեսփոխան Միշել Մեր էրէկ ներքին գործոց նախարարութեան յղեց նամակ մը, որուն մէջ կը նշուի, որ Միրնա Մեր կը հրաժարի երեսփոխանական արժողութեան համար պայքարելէ, վերջ դնելու համար մրցակիցին հրահրած համայնքային կիրքերուն:

Նամակին մէջ կ'ըսուի, որ տրուած ըլլալով որ Քուէսիտոյ Գերագոյն Յանձնախումբը Մերնի երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն վերաբերեալ իր վերջնական տեղեկագիրը ներքին գործոց նախարարին փոխանցեց 6 Յունիսին եւ ուր կ'ըսուի, որ Միրնա Մեր 15 քուէի տարբերութեամբ յաղթական է (34760ի դէմ 34745) եւ նախարարութիւնը պարտէր ընտրութեանց օրէնքի 60րդ յօդուածի հիմամբ այդ արդիւնքը յայտարարել, եւ պայմանցել խորհրդարանին, «բայց դուք կարգ մը սխալներու պատճառաւ, եւ այլ սխալներ անտեսելով այս քայլը չառիք, մինչ այդ սխալներու ճշտումը սահմանադրական խորհուրդի լիազորութիւններէն է»:

Նամակին մէջ նաեւ կ'ըսուի. «Եւ նկատի առած, որ մրցակից թեկնածուն, քաղաքական անձնատիրութիւններու միջոցաւ դիմեց ապատեղեկատուութեան եւ համայնքային ու դաւանական կիրքերու բորբոքումին, որուն պատճառով չլայտարարուեցաւ թեկնածու Միրնա Մերի նպաստաւոր արդիւնքը, երկրին մէջ ստեղծելով լարուածութիւն եւ կասկածներ՝ ընտրութեանց արդիւնքներու ճշգրտութեան շուրջ»:

«Այս բոլոր իրողութիւններէն մեկնած եւ իրեն վստահութիւն յայտնած 35 հազար քուէարկողներու արժանապատուութիւնն ու պատգամները յարգելու համար, թեկնածու Միրնա Մեր պարտք կը վճայ գոհողութիւն կատարել ի խնդիր հայրենիքի գերագոյն շահին, եւ կանխարգիլելու համար որեւէ հարց, զոր կրնայ պատճառել մրցակից կողմի որդեգրած համայնքային լարուածութիւնը սաստկացնելու ոճը», ըսաւ նամակը եւ եզրափակեց՝ պահանջելով, որ ներքին գործոց նախարարը նշէ իր քաղաքական թեկնածուի ստացած քուէներու թիւը, Քուէսիտոյ Գերագոյն Յանձնախումբի 3 Յունիս 2002ի տեղեկագիրին հիմամբ: Նաեւ ետ քաշէ արդարութեան նախարարութեան յղուած իր նամակը, որ կը պահանջէ ստուգել կարգ մը քուէատուփերու մէջ պատահած սխալները. ինչպէս նաեւ, այս նամակը համարել իրեն հրաժարում՝ ընտրութիւններու արդիւնքի յայտարարութեան ճակատամարտին, եւ անոր հիմամբ յաղթական հռչակել երկրորդ առաւելագոյն թիւով քուէներ ստացած թեկնածուն:

Միւս կողմէ, ներքին գործոց նախարար Էլիաս Մեր էրէկ խորհրդարանի ընդհանուր քարտուղարութեան յղուած նամակի մը մէջ պաշտօնապէս փոխանցեց Մերնի երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն թեկնածու Կարիէլ Մերի յաջողութիւնը, անոր մրցակիցին քաշուելուն պատճառով:

Նախարար Մեր իր նամակին մէջ ըսաւ, որ հիմնուելով թեկնածու Միրնա Մերի իրեն յղած նամակին ու քուէախոյզ յանձնախումբերու տեղեկագիրին վրայ, Կարիէլ Մեր յաղթական կ'ըլլայ Լեռնալիբանանի երկրորդ ընտրաշրջանի, Մերն գաւառի յոյն ուղղափառներու երեսփոխանական արժողութեան համար 2 Յունիսին կայացած մասնակի ընտրութիւններուն:

ԼԱՀՈՒՏ ԵՒ ԺԼՍԱՅԷԼ ԿԸ ՄԵՐԾԵՆ

Երեսփոխաններ Նեսիպ Լահուտ եւ Փիեռ Ժըմայէլ, նախկին նախագահ Ամին Ժըմայէլ եւ նորընտիր երեսփոխան Կարիէլ Մեր էրէկ տուին միացեալ մամուլի ասուլիս մը, որուն մէջ յայտարարեցին, որ կը մերժեն Մերնի երեսփոխանական մասնակի ընտրութիւններու արդիւնքին գծով նախկին փոխ վարչապետ, երեսփոխան Միշել Մերի «ելքը»:

Անոնք ըսին, որ կառչած են Կարիէլ Մերի օրինական յաղթանակին եւ Քուէսիտոյ Գերագոյն Յանձնախումբի բուն տեղեկագիրին ճշգրտած արդիւնքին: Անոնք պահանջեցին, որ նախարարաց խորհուրդը պաշտօնազրկէ ներքին գործոց նախարարը «որովհետեւ Լիբանանի ժողովուրդը ալ չի կրնար անոր վստահել ընտրութիւններու կազմակերպումը»:

Երեսփոխան Նեսիպ Լահուտ ըսաւ, որ ներքին գործոց նախարարի խորհրդարան յղած նամակէն ընդունելի է միայն Կարիէլ Մերի ընտրութիւնը հաստատող տողը: «Մենք իշխանաւորներուն հետ համաձայնութիւնը կամ այս գծով զիջումը կը մերժենք», ընդգրծեց ան:

ՅԱԽԱԿՑԱԿԱՆ ԸՆՈՒԳԻՐՆԵՐ՝ Ը. ԱՍԱՏԻ ՍԱՀՈՒԱՆ Բ. ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻԹՈՎ

Սուրիոյ նախկին նախագահ Հաֆէզ Ասատի մահուան Բ. տարեկիցին առիթով շիրինբու գերազանց շէյխ Ապտէլ Էմիր Քապալան էրէկ այցելեց Քըրտահա, ուր ցաւակցութիւն յայտնելէ ետք արտասանեց խօսք մը, որուն մէջ յիշեցուց մեծ դեկավարին առաքինութիւնը, խոհեմութիւնը, սկզբունքային անզիջողութիւնն ու հեռատեսութիւնը:

Ան նաեւ յիշեցուց, որ Հաֆէզ Ասատ պայքարեցաւ Պաղեստինի, Երուսաղէմի, Երպրանի եւ կորուստի ազատագրումին, ինչպէս նաեւ պաղեստինցի զաղթականներու տունդարձին համար, եւ արդի Սուրիան կերտած ղեկավարը նաեւ բաժանումէ փրկեց Լիբանանը: «Կը միտնարուի՞նք՝ տեսնելով նախագահ Պաշար Ասատը, որ կը շարունակէ իր հօր ուղիքը՝ զիծն ու երթը» եզրափակեց ան:

ՅԱԽԱԿՑԱԿԱՆ ԸՆՈՒԳԻՐՆԵՐ

Սուրիոյ նախկին նախագահ Հաֆէզ Ասատի մահուան երկրորդ տարեկիցին առիթով ցաւակցական հեռագիրներ յղուեցան նախագահ Պաշար Ասատի՝ քաղաքա-

կան զանազան անձնատիրութիւններու կողմէ: Նախկին վարչապետ Սելիմ Հըս ցաւակցական իր հեռագիրին մէջ շեշտեց, որ Հաֆէզ Ասատ Քապալան էր իր հարգածն ու արարական հարցին եւ յատկապէս պաղեստինեան հարցին խիղճը եւ միշտ կառչած մնացած է արդար եւ ամբողջական խաղաղութիւն հաստատելու կեցած փորձին, որովհետեւ միայն այդ ճեղով արարներուն կը վերադառնան իրենց իրաւունքները:

Նախկին վարչապետ Ռաշիտ Սուլս շեշտեց, որ մեծ մարդ է Հաֆէզ Ասատ եւ առաջին ղեկավարը եղած է, որ կերտած է Սուրիան եւ պաշտպանած զայն, ամբողջ արարական աշխարհին ցօրակցութեան կողքին:

Երեսփոխան Ալի Ռաշիմ Նըեց, որ ան եղած է եւ միշտ ալ կը մնայ արաբ պատմական ղեկավարը, որ ոչ մէկ ճիգ ինչպէս է արարական աշխարհի բռնազրուած հողերուն ազատագրութեան ի խնդիր:

Երեսփոխան Ժամալ Իսմայիլ վեր առաւ Հաֆէզ Ասատի յիշատակը եւ զայն կոչեց հերոս մը, որ ողջագրուած է Լիբանանի հետ եւ ղէմ դրած բաժանումին: Հարաւի պատասխանատու պաշտօնատար-

ներ յղեցին նաեւ հեռագիր մը, որուն մէջ ցաւակցութիւն յայտնեցին նախագահ Պաշար Ասատի: Հեռագիրին մէջ շեշտուած էր Իսրայէլի ղէմ ընդդիմադրութեան շարունակութեան անհրաժեշտութիւնը լաւապէս գիտակցած Հաֆէզ Ասատի դերը, ինչպէս նաեւ Լիբանան - Սուրիա միասնականութեան ամբողջականութեան մէջ անոր ունեցած կարեւոր ազդեցութիւնը:

Պեքաշի ղեկավարներ եւ պատասխանատուներ իրենց հեռագիրին մէջ նշեցին, որ Պար Էլիասի պողոտան, որ կը տանի ղէպի Պէյրութ եւ Դամասկոս կոչած են «Հաֆէզ Ասատ»:

Լիբանանեան կուսակցութիւններու անունով յղուած ցաւակցական հեռագիրը շեշտեց Հաֆէզ Ասատի ներկայութիւնը, իր միտքերով, ռազմավարական հայեցողութեամբ, կամքով եւ արարական իրաւունքին նկատմամբ ցուցաբերած վճռականութեամբ:

Լիբանանի Պասս կուսակցութիւնը իր հեռագիրին մէջ վեր առաւ Հաֆէզ Ասատ ղեկավարը եւ յարատեւ պայքարող ի շահ արարական երկիրներու բարօրութեան եւ բարգաւաճման:

ԵԼ ԵԿՏՐԱԿԱ ՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՄԵՓԱԿԱ ՆԱՇՆՈՐՀԵԼՈՒ ԾՐԱԳԻՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ելեմուտքի եւ պետական պիւտճէի խորհրդարանական յանձնախումբը էրէկ ընդունեց Միտիլին սկսած քննարկումը երկտրականութեան ընկերութիւնը ապապետա-

կանացնելու ծրագիրին: Ուժանիւթի նախարար Մոհամէտ Ապտէլ Համիտ պայտուէր, որ Ժողովին մասնակցեցաւ, հաւաստեց, որ երկտրականութեան պարագային պիտի

չկրնուին բլիթային հեռաձայնի ապապետականացումին շուրջ ստեղծուած հարցերը:

Ան մաղցեց, որ այս օրինագիծը կը վաւերացի երկու ամիսէն՝ առիթ տալով, որ այս մարզի մէջ մասը ապապետականացուի այս տարի:

Նախարար Պայտուէր յայտնեց, որ երկտրականութեան հարցը լուծելու ընթացքում քանակականութեան սկսած է եւ զանազանները աւելցած են 50 միլիարդ Լ. ոսկիով, իսկ եթէ այս ընթացքը շարունակուի, ապա տարեկան զանազանները պիտի աւելնան 150 միլիարդ Լ. ոսկիով:

Նախարար Պայտուէր նաեւ ըսաւ, որ ցարդ հարիւր հազար երկտրականութեան սպառումի «ժամացոյց» ստուգուած է եւ այս ստուգումը պիտի ամբողջանայ մէկ տարիէն՝ վերջ դնելով ամէն տեսակի խարդախութեան եւ գողութեան:

Վերջերս մայրաքաղաքի եւ արուարձաններու հոսանքի ընդհատումին մասին՝ Պայտուէր ըսաւ, որ պատճառը ջերմաստիճանի եւ խոնավութեան բարձրացումն է, իսկ մայրաքաղաքին մէջ թաղամասի մը պարագային՝ Սոլիտէրի շրջանին համար նոր երկտրականացումի մը գետեղումը:

Ծար-ը՝ էջ 10

«ՄՈՒՍՍՈՎՔՊԱԼ» ՀԱՅՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒՄԸ ՅՕԴՈՒՄԸ ՄԸ ՀՐԱՏԱՐԱԿՄԸ Է

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

10 Յունիսի տեղական մամուլը պանապան հարցերու կարգին տակաւին կը կեդրոնանայ Մերնի ընտրութիւններուն վրայ:

«Տիար»-ի համաձայն՝ «իշխանութեան վերամիաւորման եւ պետական հաստատութիւններու վերակենդանացման վերաբերող սուրիական թելադրանք մը վերջ տուաւ ընտրական տագնապին: Միշել Մեր քաղաքական լուծում մը յայտարարեց, բայց պետութիւնը եւ դատական իշխանութիւնը դեռ լուր կը մնան. այս ընտրութիւններուն առիթով համայնքային ծայրալեռնութիւնները եւ միլիտերու յատուկ զաւթարները յաղթանակեցին: Ժամապ կը հերքէ, թէ փորձած է կապ հաստատել Միշել Աունի հետ»:

«Նահար» կը գրէ, թէ ընտրութեան հարցով քաղաքական միջին լուծում մը երեւան եկաւ, բայց ընդդիմութիւնը վերապահ է այս գծով: Միշել Մեր իր աղջկան անունը մրցապայքարէն քաշեց եւ Կարիէլ Մեր այսօր երեսփոխան կը դառնայ: Միշել Մեր պատկերաւոր ձեւով ըսաւ, թէ ծխախոտը պիտի չվառէ, որպէսզի երկիրը չայրի:

«Սաֆիր» կը նշէր. «Եւ եօթներորդ օրը պայտին մթնոլորտը փոխուեցաւ ու տագնապը փարատեցաւ: Միշել Մեր յայտարարեց, աղջիկ՝ Միրնան յաղթական դուրս եկաւ, բայց անոր անունը ետ կը քաշեմ՝ գրգռութիւններու առիթ չտալու եւ երկրին գերագոյն շահերը պահպանելու համար»: «Լիուս» այս մասին անդրադառնալով կը գրէր, թէ Մերնի ընտրութեան թատրոնի վերջին արարը փակուեցաւ: Միշել Մեր իր աղջկան անունը պայքարէն ետ քաշեց, որպէսզի իր եղբայրը՝ Կարիէլ ընտրուած նկատուի: «Լիուս»-ի համաձայն՝ Ամին Ժըմայի թերթի թղթակիցին ըսած է, թէ որեւէ լուծում, որ օրինական հիմք չունի, անընդունելի է իրեն համար:

«Պայրաք» կը նշէր. «Ծաբաթավերջի անակրկալը. բազմակողմանի շփումներէ եւ նախագահին հետ տեսնուելէ ետք, Միշել Մեր յայտարարեց իր «յաղթական» աղջկան պայքարէն քաշուիլը, Քուէսիտոյ Բարձրագոյն Յանձնախումբը այսօր պիտի չհաւաքուի եւ հետագային ալ սահմանադրական դատարանին մօտ բողոք պիտի չներկայացուի»:

Միւս կողմէ, «Քիֆաի Արապի» կը գրէր, թէ ներքին գործոց նախարարը վերադարձած է իր նախարարական աշխատանքներուն, Ծաբաթ երեկոյեան վարչապետին հետ հաշտուելէ ետք: Միշել Մեր յայտարարած է, թէ ըստ օրէնքի յաղթած ենք, բայց կը քաշուինք չոռուր իրողեան փրկելու համար:

«Մուսթաքալա» օրաթերթը իր ներքին էջերով հայութեան նուիրուած յօդուած մը հրատարակած է: Յօդուածագիրը՝ տոքթ. Փիլիպ Նասմէն յուսարձակի տակ առած է մանրամասնօրէն ներկայացուցած է հայութեան ծագումը, հայերէն լեզուն, ցեղասպանութիւնն ու արքայը, հայութեան վերապրումը եւ Սփիւռքի մէջ հաստատուիլն ու վարգանալը: Ան նաեւ անդրադարձած է հայութեան յատկութիւններուն, ինչպէս ետք կրկին ոտքի էլլելու եւ երթը շարունակելու աննկուն կամքին, որեւէ երկրի մէջ ազդեցիկ դերակատարութիւն ունենալու տուեալին, հայ մշակոյթին եւ այլն:

Տեղական մամուլը նաեւ յուսարձակի տակ առած է Արամ Ա. կաթողիկոսին ու Ազգային Ժողովի պատգամաւորներուն այցելութիւնը՝ նախագահ յօր. Էմիլ Լահուտի:

Թերթերը նաեւ անդրադարձած են «Քուսիթի ին» պանդոկին մէջ Թրիփոլիի հայ համայնքի տարեկան ճաշկերտութիւն, որուն հովանաւորն էր փոխ վարչապետ Իսամ Ֆարես:

Իր խօսքին մէջ փոխ վարչապետը յուսարձակի տակ առած է հայութեան ունեցած դերակատարութիւնը Լիբանանի պանապան բնագաւառներուն մէջ եւ համայնքին ունեցած ներդրումը երկրին պարգայցման գործընթացին մէջ: Ան նաեւ խօսած է դժուարութիւնները դիմագրութելու եւ ճամբան անշղթ շարունակելու հայութեան անոր կամքին մասին:

«Լիուս» օրաթերթը իր էջերով տուած է իր իսկ կազմակերպած «երիտասարդներն ու ընտրութիւնները» խորագիրով համախումբի մասին. եօթը այլ կուսակցութիւններու ներկայացուցիչներուն կողքին Հ. Յ. Դ. Չ.Ո.Ս. եւս իր մասնակցութիւնը բերած է: Ընտրութիւններուն կողքին, արծարծուած են նաեւ լիբանանեան քաղաքական կեանքին մէջ երիտասարդու-

Ծար-ը՝ էջ 10



ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիվն:

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ՈՐՈՒԻ ԿԱՄԻՆՉ ԲԱՆԻ ԿԸ ԾԱՌԱՅԵ ՀԱՅԵԹՈՒՐԲ ՀԱՇՏԵՑՄԱՆ ՄԻՏՈՒՄԸ

Իբրև գրական պատկեր կը գործածենք բեւեռէն իջնող սառցալեռները, անոնց երեւոյցը եւ չեբեցոյցը մասերուն վրայ ուշադրութիւն հրաւիրելով, ապա ըսելու համար, որ անոնց երեւոյցը մասէն աւելի մեծ է պահուած մասը: Այս բաղդատութեամբ փորձենք հասկնալ հայեւթուրք հաշտեցման նախաձեռնութիւնները եւ միտումը, եւ ի հարկէ թէ՛ կարենանք բացատրել, թէ՛ որո՞նք կան անոնց ետին, ո՞վ կը բաշտէ խամաճիկի թելերը, եւ ո՞վ կամ որո՞նք կը խաղանայ դերերը: Կամ՝ կան ընդհանուր ռազմավարութիւն մը եւ աշխարհահայեացք մը, որոնցմով կ'առաջնորդուին եւ գաղափարները, եւ դերակատարները: Նոյնիսկ ի՞նչ անգոր ենք ճակատ յարգարելու համար՝ խորհային կամ համամարդկային համարուած ռազմավարութիւններու դէմ, առնուազն փորձենք լուսաբանուիլ եւ լուսաբանել հայ զանգուածները:

Ինչո՞ւ յեղակարծօրէն հրապարակ նետեցին հայեւթուրք հաշտեցման կարգախօսը: Ինչո՞ւ հաշտեցում եւ ոչ բանակցութիւն կամ արդարութեան եւ ճշմարտութեան հաստատում: Հաշտեցումը ի՞նչ կ'ենթադրէ: Յարդ ոչ ոք այս մասին ուզեց խօսիլ: Ո՞վ եւ որո՞նք շահագրգռուած են եւ ո՞ր կը ձգտին: Ոչ ոք չբարձրացաւ, երբ աշխարհի հզօրագոյն ուժը հրապարակ իջաւ այս հարցով եւ ոչ ոք բացատրեց, թէ՛ ինչո՞ւ, չըջանցելով Հայաստանը եւ այն կազմակերպութիւնները, որոնք ցարդ պայքար տարած են հայոց իրաւունքներու հետապնդման համար, դրամատիրական-դասակարգային եւ ոչ ներկայացուցչական կազմակերպութիւն մը ընտրուեցաւ հաշտեցման ուղին հարթելու համար: Բանավէճով տարուած, այս հարցումները ոչ ոք ուղղեց եւ բացատրեց: Ինչո՞ւ չըջանցել միտութեան մը, որ անցեալ ունի, որ սաներ կը պահէ, ժողովուրդ կը համախմբէ, եւ դիմեցին Հայկական Համագումարին:

Երեւոյթը այսքանով չի սահմանափակուիր: Հայկական Հարցին շրջերը կտրելու համար, Սփիւռքի մէջ մանաւանդ, հիւրընկալ երկիրներու իշխանութիւնները բարեացակամութիւն կը ցուցաբերեն անոնց նկատմամբ, որոնք այսպէս կոչուած ծայրայեղական չեն, զանոնք կը համարեն խօսակից: Զարմանալի է. պահանջատիրութիւնը կը համարուի ծայրայեղութիւն, իսկ անցեալը պատմական երեւոյթի վերածելու միտումը՝ ընդունելի, քանի որ չի խանգարեր, հաւասարակշռութիւն չի խախտեր, արգելք չ'ըլլաւ առեւտրական-ճարտարարտեսական նոր փոփոխութեան, որ ազատ շուկայի եւ տնտեսութեան համաշխարհայինացումն է: Այս հասկնալու համար հարկ է պատասխանել պարզ հարցումի մը. ո՞վ եւ որո՞նք կ'օգտուին այս նոր ռազմավարութեանէն, ո՞վ եւ որո՞նք կան անոր ետին, ի՞նչ կապեր ունին հայաստան այն գործիչները, որոնք գիտակցաբար կամ անգիտակցաբար կը ծառայեն այս ռազմավարութեան:

Ժամանակակից կայսերապաշտութիւնը, այսինքն՝ միջազգային դրամագրուի անարգել տիրապետութեան հաստատումը, որ կապ ունի անցեալ դարերէ բխող ծաւալապաշտութեան հետ, կը ձգտի ստեղծել յարմարագոյն պայմանները ոչ թէ՛ ժողովուրդներու եւ մշակոյթներու զարգացման, ինքնուրոյնութիւններու յարգանքի, այլ դրամագրուի եւ անկէ՛ յառաջացած շահերու կուտակումին: Այդ դրամագրուութիւնն է, որ այսօր կը ձգտի հակակշռել հանրային կարծիքը՝ զանգուածային լրատուական միջոցները իւրացնելով, տէր դառնալով երկիրներու ռազմավարական նշանակութիւն ունեցող կոռոյցներուն՝ ճանապարհներ, հարդրակցական միջոցներ, ուժանիւթի մատակարարում, գերիշխան լեզուի մը հաստատում եւ այլն: Այս երեւոյթին չեն անդրադառնար հայկական զանգուածները, քանի որ չեն լուսաբանուիր, քաղաքական-գաղափարաբանական ըմբռնումի տարածման բացառութիւն կայ, այդ զանգուածները չեն մասնակցիլ գիտակից բլիթներու պայքարի նախաձեռնութիւններուն:

Թէ՛ ո՞վ եւ որո՞նք կան այս դաւադրութեան ետին, հասկնալու համար մեծ քաղաքագէտ ըլլալու կարիք չկայ: Կան ապագային շարժումներ: Մեր ներագալի կեանքին մէջ առաջնորդող մտածումը հաշտեցում-համախոհութիւն-տեղատուութիւն-գիշտում-մոռացում հնգեակէն պէտք չէ որ ներշնչուի՝ ծնունդ տալու համար կեցող միտութեան եւ կեդրոն համարուած ղեկավարութեան, որ դիտակցաբար կամ անգիտակցաբար պիտի ծառայէ թաքուն ռազմավարութեան, որ, վերջին հաշուով, դաւադրութիւն է բոլոր իրաւազրկուածներու դէմ:

Փայտներ եւ բաժակաճառեր վնասակար են: Բաժակները, թափանցել անոնց խորքը: ԵՆՈՒՆԵՍԿՕ-ի նախկին ընդհանուր տնօրէնը՝ Ֆետերիքօ Մայոր կ'ըսէր. «Վաղը միշտ ուշ կ'ըլլայ»:

Յ. ՊԱՆԵԱՆ

«ՍԱՐՍԱՐԱ» ԿԸ ՊԱՐԶԱԲԱՆԵ՛

Ի՛ՆՉ Կ'ԸՆԴԳՐԿԵ «ԱՐԱՐԱՏ»ԻՆ ՀԱԿԱԶԳՈՂ ԹՐՔԱԿԱՆ ՀԱԿԱՀԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Աթոմ էկոյեանի ժապաւենից իբրև հակազդեցութիւն, Հայկական Ուսումնասիրութիւններու Թրքական Հիմնարկի հրատարակած գիրքից անդրադառնալով («Արարատ. հայկական քարոզչութեան արուեստի միջոցով»), Պոլսոյ «Մարմարա» օրաթերքը կը փոխանցէ որոշ մանրամասնութիւններ, որոնք մեր ցախորդ լրատուութեան վրայ կ'աւելցեն կարգ մը նորութիւններ (Այս մասին տեսնել «Ազգայի» 7 Յունիսի Հայ Դատի էջին անդրադարձը՝ «Թուրքեր Արարատ»-ին կը հակազդեն հակահայ հրատարակութեամբ մը):

«Մարմարա» կը տեղեկացնէ, որ գիրքից հեղինակները՝ Սետաք Լաչիցիքի եւ Շենոլ Քանթարքը «առատ տեղեկութիւն» փոխանցած են գիրքից միջոցով: Գիրքից մէջ նախ կը ներկայացուի, թէ հայեր ինչպէս «գեղարւեստը օգտագործած են իրենց քարոզչութեան համար»: Նշուած են բոլոր այն ժապաւենները, ինչպէս նաեւ՝ հաստատութիւնները, թերթերը, ուսանողական միութիւնները, կուսակցութիւնները, փառատօները եւ եկեղեցիները:

Գիրքից երկրորդ մասին մէջ կը քննարկուի «Արարատ» ժապաւենից պարագան: Հարց կը դրուի, թէ անկախ արուեստ է, թէ քարոզչութիւն, ինչ է նպատակը, ինչպիսի խորհրդանշաններ գործում են ժապաւենի մէջ, որո՞նք հոգացած են անոր պատրաստութեան ծախսերը, ի՞նչ է եղած է քրքրական կողմից հակազդեցութիւնը: «Արարատ» ժապաւենից: Յատուկ բաժնով մը ներկայացուած է Աթոմ էկոյեանի կեանքն ու գործունեութիւնը:

Գիրքից երկրորդ մասին մէջ կը քննարկուի «Արարատ» ժապաւենից պարագան: Հարց կը դրուի, թէ անկախ արուեստ է, թէ քարոզչութիւն, ինչ է նպատակը, ինչպիսի խորհրդանշաններ գործում են ժապաւենի մէջ, որո՞նք հոգացած են անոր պատրաստութեան ծախսերը, ի՞նչ է եղած է քրքրական կողմից հակազդեցութիւնը: «Արարատ» ժապաւենից: Յատուկ բաժնով մը ներկայացուած է Աթոմ էկոյեանի կեանքն ու գործունեութիւնը:

ՔՈՆԿՐԷՍԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒՆ ՈՒՂՂՈՒԱԾ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿՆԵՐ

Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը Քոնկրէսի ընտրութիւններուն առիթով պատրաստած է հարցաթերթիկ մը՝ ծանօթանալու համար հայկական հարցերու նկատմամբ տարբեր թեկնածուներու կեցուածքներուն: Յանձնախումբը կոչ ուղղած է ամերիկահայերուն, որպէսզի այցելեն համացանցի իր կայքը (www.anca.org) եւ հոն զետեղուած հարցաթերթիկը ուղարկեն իրենց շրջանի թեկնածուներու հասցէներուն:


Ինչ կը վերաբերի Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրաւունքին, Քոնկրէսի թեկնածուները մամբ տարբեր թեկնածուներու կեցուածքներուն: Յանձնախումբը մէջ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրաւունքին, թէ ոչ: Հարցաթերթիկը

կ'անդրադառնայ նաեւ Յօդուած 907ի առկայության, Ազգայէջմանին տրամադրուած ամերիկեան օժանդակութեան եւ Հայաստանի շրջափակումին վերաբերող «Մարդասիրական միջոցաբաժնի» օրէնքին, Սիացեալ Նահանգներու կողմէ թուրքից զէնքերու վաճառքին, ինչպէս նաեւ՝ Պաքու - Ճէյհան քարիւղատարին:

ՆՈՒԸՆՊԸՐԿ ԵՒ ՓԱՒՈՆ ԿԸ ԴԻՄԵՆ ՆԱԽԱԳԱՀ ՊՈՒԾԻ

Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան անդամներ՝ Ֆրէդք Փալոն եւ Ճօ Նոլանը վերջերս նախագահ Ճորճ Պուշի յղուած նամակով մը մանրամասն տեղեկութիւններ պահանջեցին Ազգայէջմանի կատարուած զինուորական օժանդակութեան մասին:

Քոնկրէսի հայկական հարցերու խմբակցութեան երկու նախագահները որոշեցին նամակը նախագահ Պուշին ուղարկել՝ ազերի կառավարական պաշտօնատարներու պատերազմի մասին կատարած ազդարարութիւններէն ետք: Նամակին մէջ Ներկայացուցիչներու Տան անդամները տեղեկութիւններ կը պահանջեն Ազգայէջմանին տրուելիք ամերիկեան օժանդակութեան մասին եւ մտահոգութիւն կը յայտնեն նախագահ Հայտար Ալիեւի սպառնալու յայտարարութիւններուն համար: Անոնք դիտել կու տան, որ այս վտանգաւոր զարգացումը կրնայ վայրագութեան առաջնորդել եւ Միացեալ Նահանգներ պէտք է անմիջական կերպով հակազդեն Ազգայէջմանի պատերազմի սպառնալիքներուն:



ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Քալիֆորնիոյ խորհրդարանը Մայիս 30ին մեծամասնութեան ձայնով (70 - 0) վաւերացուց Հայկական Յեղասպանութիւնն ու Ողջակիզումը Քալիֆորնիոյ հանրային վարժարաններու կրթական ծրագրին մէջ ներառելու բանաձեւ մը: Բանաձեւը առ ի վաւերացում պիտի փոխանցուի նահանգային ծերակոյտին:

Բանաձեւին հիմամբ նահանգը պիտի հիմնէ կեդրոններ, ուր իբրև ցեղասպանութիւններու կանխարգիլման միջոց՝ Հայկական Յեղասպանութեան եւ Ողջակիզումին մասին դասուր պիտի տրուին ուսուցիչներու եւ աշակերտներու:

Այս մասին լրատուութիւնները կը նշեն, որ Միացեալ Նահանգներու թուրք բնակիչները իրենց կարելին կատարած են բանաձեւին վաւերացումը արգիլելու համար: Քալիֆորնիոյ Թրքական Մշակութային կազմակերպութեան ներկայացուցիչ Գարահան Մեթիս մամուլային ասուլիսի մը ընթացքին բանաձեւը նկարագրած է իբրև «վարկաբեկիչ», աժան քաղաքականութեան դրսեւորում եւ պարկեշտութեան սահմաններէն դուրս եկող»: Ան աւելցուցած է, որ Հայկական Յեղասպանութեան դասաւանդումը «քաղաքական նպատակներով ամերիկացի երիտասարդներուն միտքը պղտորելու փորձ մըն է»:

Միւս կողմէ, Հայ Դատի Յանձնախումբը որջուած է բանաձեւին վաւերացումը: Յանձնախումբը օրին զօրակցութիւն յայտնած էր այս բանաձեւին եւ մեծ աշխատանք տարած էր անոր վաւերացումին համար:

ՍՈՐԱՊՈՒՐԿ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՐԱՑՈՒՄԸ ԸՆՏՐԱՊԱՅՔԱՐԻ ԽԱՂԱՔԱՐՏ

Թրքական «Հուրիթէք» թերթը կը տեղեկացնէ, որ Ֆրանսայի խորհրդարանական ընտրութիւններուն, Սթրազպուրկի շրջանին իր թեկնածութիւնը ներկայացուցած ժան - Փօլ Փրոփսթ Հայկական Յեղասպանութեան ճանաչման պահանջը «հսկայական սխալներ» նկատած է: Ֆրանսայի Ընտանիքներու Օգնութեան Հիմնադրամի տնօրէն ժան - Փօլ Փրոփսթ անհասկնալի գտած է պատմական իրողութիւններու մասին գնահատականն տալու Ֆրանսայի փորձը եւ դիտել տուած է, որ դարասկիզբին պատահած դէպքերը եղած են «պատմաբանութիւններ, զորս անձնական շահերէ թելադրուած՝ արեւմտեան տէրութիւնները օգտագործած են Օսմանեան կայսրութիւնը կործանելու համար»: Ան կոչ ուղղած է Ֆրանսայի խորհրդարանին, որ վերատեսուութեան ենթարկէ պատմական իրադարձութիւններու մասին իր կեցուածքները եւ բարձր մակարդակի յարաբերութիւններ հաստատէ թուրքից հետ:

ՔԱԶԻՄԻՐՈՎ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԵ ՊԱՔՈՒԻ ԿԵՅՈՒԱԾՔԸ

Լեռնային Ղարաբաղի բանակցութիւններուն Ռուսիոյ նախագահի նախկին ներկայացուցիչ Վլատիմիր Քազիմիրով ռուսական «Վրեմիա» թերթին մէջ հրատարակած է յօդուած մը, ուր քննադատած է Լեռնային Ղարաբաղը հակամարտութեան կողմ չնկատելու Պաքուի փառական կեցուածքը:

«Ստեփանակերտը իբրև հակամարտութեան կողմ չճանչնալու, ինչպէս նաեւ բանակցութիւններուն անոր մասնակցութեան դէմ դնելու Ալիեւի առարկութիւնները տրամաբանական հիմնաւորում չունենին», ըսած է Քազիմիրով եւ աւելցուցած է, թէ անցեալին քանի մը անգամ Պաքու ուղղակի կապ հաստատած է Ստեփանակերտի հետ, յատկապէս՝ պատերազմի ընթացքին եւ այդ շրջանի եւ փաստաթուղթերուն մէջ Լեռնային Ղարաբաղին անդրադարձած է իբրև «կողմ»:

Դիւանագէտին կարծիքով, եռակողմանի բանակցութիւններուն Պաքուի մերժումը եւ այդ գծով ԵԱՀԿ Մինսքի խմբակի նախագահներուն գիշողական կեցուածքը ձախուրթութեան կը մատնեն Հայաստանի եւ Ազգայէջմանի նախագահներու անձնական ներկայացուցիչներուն հանդիպումները: Քազիմիրով պնդած է, որ Լեռնային Ղարաբաղը առանձին չի կրնար բանակցութիւններու առարկայ դառնալ:

www.hamazkayin.com

ՏԱՐԱԿՐԱԶԻ ԼԱՄԱՐՈՅՆ ՆՈՒԹԸ ԱՅՍ ԱՄԻՍ ՅԱՏՈՒԿ ԳԻՆ ԲՈՒՈՐ Ա ՏԱՌՈՎ ՍԿՍՈՂ ԱՆՈՒՆԵՐՈՒՆ ԿԵՍ ԺԱՄՆՈՑ VIDEO CLIPՆԵՐ ԱՆՁԻՆ ԱՆՈՒՆՈՎ, ՄԱԿԱՆՈՒՆՈՎ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵԿԱՐՆԵՐՈՎ Դիմել՝ ԱՐԱ ԲԵԷԲԵԱՆ ՀԱՍ. Հեռ. 01 / 261696, 03 / 250518

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿԻՐ ԴՐԱՆՏԱՎԱՅՐ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ԵՒ ՎԱՋՈՒՐՄԱՆ ԱՆՎԱՄԱՍԿԱՆ 2ՈՅՁ ԾՐԱՊՈՑՆԵՐ ԴԵՊՈ

ՍԵՒԱՆ ԵՒ ԱՐԶՆԻ Ա. ԵՒ 29 ՅՈՒՆԻՍ: Բ. ԵՒ 30 ՕԳՈՍՏՈՍ 21 ՕՐ: 10 ՕՐ ՊՅՏՆԵՐ ՕՐԱԿԱՆ 4 ԱՆՍԱՍ ՈՐՏՈՒՄ, ԿԻՉԱՆ, ՏՈՒՐԵՐԸ, ՕՐԱԿԱՆԻ ՏՈՍՍԸ

Սիցել: 12 տարեկան՝ 399 \$, 12-16 15 տարեկան՝ 495 \$, 16-19 տարեկան՝ 555 \$, 20-24 790 \$

Մեղգեան Կրթական Հաստատութեան ամառային հանդիսի ամբողջ, շրջապատայն դպի կիսորս 146 17 Յունիս: Փին՝ միայն 1995 սկսեալ:

Այն օր ամուսնի իրիկուն՝ մեր օրաստեճակին անցելը, շքեղ օրոշարներով դպի Կալէն, Դամակոն եւ Լաքաթիս, 6 ՏԵՍ սկսեալ:

4204Գ. ԱՃՃԵԱՆ ԹՈՒՐՁ Հեռ. 01/261177, 01/240654 եւ 03/233978 Գործակալութեամբ՝ TRANSPORT & TOURISM SERVICES S. A. L.

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ԾԱՂԿԱԽՏԻ ԺԱՀՐԻՆ ՓՈՒՑՈՒՄԸ ԿԸ ՅԵՏԱԶԳԷ

ՄԱԿԻ առողջապահության հարցերու պատասխանատու մարմինը Մայիսի կեսերուն յայտարարեց, որ աշխարհի տարածքին մնացած ծաղկախտի ժահրին վերջին պահեստներուն ծրագրուած փճացումը յետաձգած է առթի տալու համար, որ յաւելեալ հետազոտութիւններ տեղի ունենան կենսաախաբեկչական գէնքերու մէջ գործածելի այդ ժահրին դէմ պատուաստներու շուրջ:

Առողջապահության Համաշխարհային Կազմակերպութիւնը երկու տարի առաջ 2002ը ժամկետ ձգած էր մնացեալ պահեստներէն ձերբազատելու համար, այն յոյսով, որ մահացու հիւանդութիւնը, որ 1977ին պաշտօնապէս չքացած հռչակուած էր, այլեւս բնաւ պիտի չվերադառնայ:

Սակայն, Ս. Նահանգներու մէջ Սեպտեմբեր 11ի տղամաշայն անճանապարհական գործողութիւններէն ետք, «ԱՄՅՐԱՅՍ»-ի պատճառով 5 հոգիի մահը թափ տուած է մտավախութիւններու, թէ քաղաքական ծայրայեղական խմբակներ կրնան կենսաբանական թունաւոր միջոցներ օգտագործել:

Անցեալին աշխարհի ամենէն սարսափազդու հիւանդութիւններէն մէկը հանդիսացած ծաղկախտը իր զոհերուն շուրջ 30 առ հարիւր կը սպաննէ եւ ուրիշներ կ'այլանդակէ:

Երբ անը հիւանդանոցայ ազդու դարմանում չկայ, սակայն ժահրին ենթակայ ըլլալու յաջորդող օրերուն պատուաստուիլը կրնայ հիւանդութիւնը կանխարգիլել:

Անոր բնաջնջումը ցարդ կը նկատուի

համաշխարհային առումով բժշկագիտութեան մարզի մեծագոյն յաջողութիւններէն մէկը, եւ միջազգային համայնքը անմընդ կը սպասէր այդ իրադրո՞ւմը վերջնական յաջողութեամբ պսակել՝ ի վերջոյ փճացնելով ժահրին մնացեալ պահեստները:

Սեպտեմբեր 11ի եւ անոր յաջորդած դեպքերէն ետք, ՄԱԿի Առողջապահութեան Համաշխարհային Ժողովը, որ Ա. Շ. Կազմակերպութեան որոշում կայացրող մարմինն է, վճռած է մնացեալ պահեստները չփճացնել եւ հարցը քննարկուի Գերկայացմէ 2005ին:

Ծաղկախտէն անդին, պետութիւններ եւ մասնագիտական կեդրոններ միջոցառումներ կը մշակեն պայքարելու համար կենսաախաբեկչութեան դէմ:

ԿԵՆՍԱԶԷՆՔԵՐՈՒ ԿԵԳՐՈՒՄԻ ՄԸ ԱՌԱՋԱՐԿ

Ամերիկացի գիտնականներ փետրուարին առաջարկեցին հաստատել կեղծումը, որ պէտք է պարունակէ կենսաախաբեկչական յարձակումի մը ընթացքին գործածելի բոլոր մանրէներուն եւ ժահրերուն ծիւնային մանրամասնութիւնները:

Գիտութեանց Յառաջդիմութեան Ամերիկեան Ընկերակցութեան Պոսթընի տարեկան ժողովին գիտնականներ խօսած են նաեւ այլ նախաձեռնութիւններու մասին: Անոնք առաջարկած են ապահովութեան յաւելեալ միջոցառումներու գիմել գիտաշխատանքներու մէջ, ուր վտանգաւոր մանրէներ եւ ժահրեր կը պահուին: Անոնք առաջարկած են նաեւ վարակումներու ախտաճանաչման նոր միջոցներու մշակումը:

Նախագահ Ճորժ Պուշի վարչակարգը մեծ գուժամարներ յատկացուցած է կենսաախաբեկչութեան հակամիջոցառումներու մշակումին: Անիկա կազմած է գիտական խորհրդատու յանձնախումբ մը, որ պէտք է որոշէ, թէ այդ գուժամարը ինչ ձեւով պիտի ծախսէ:

Նախագահ Ճորժ Պուշի վարչակարգը մեծ գուժամարներ յատկացուցած է կենսաախաբեկչութեան հակամիջոցառումներու մշակումին: Անիկա կազմած է գիտական խորհրդատու յանձնախումբ մը, որ պէտք է որոշէ, թէ այդ գուժամարը ինչ ձեւով պիտի ծախսէ:

Նախագահ Ճորժ Պուշի վարչակարգը մեծ գուժամարներ յատկացուցած է կենսաախաբեկչութեան հակամիջոցառումներու մշակումին: Անիկա կազմած է գիտական խորհրդատու յանձնախումբ մը, որ պէտք է որոշէ, թէ այդ գուժամարը ինչ ձեւով պիտի ծախսէ:

Նախագահ Ճորժ Պուշի վարչակարգը մեծ գուժամարներ յատկացուցած է կենսաախաբեկչութեան հակամիջոցառումներու մշակումին: Անիկա կազմած է գիտական խորհրդատու յանձնախումբ մը, որ պէտք է որոշէ, թէ այդ գուժամարը ինչ ձեւով պիտի ծախսէ:

Նախագահ Ճորժ Պուշի վարչակարգը մեծ գուժամարներ յատկացուցած է կենսաախաբեկչութեան հակամիջոցառումներու մշակումին: Անիկա կազմած է գիտական խորհրդատու յանձնախումբ մը, որ պէտք է որոշէ, թէ այդ գուժամարը ինչ ձեւով պիտի ծախսէ:

Նախագահ Ճորժ Պուշի վարչակարգը մեծ գուժամարներ յատկացուցած է կենսաախաբեկչութեան հակամիջոցառումներու մշակումին: Անիկա կազմած է գիտական խորհրդատու յանձնախումբ մը, որ պէտք է որոշէ, թէ այդ գուժամարը ինչ ձեւով պիտի ծախսէ:

Նախագահ Ճորժ Պուշի վարչակարգը մեծ գուժամարներ յատկացուցած է կենսաախաբեկչութեան հակամիջոցառումներու մշակումին: Անիկա կազմած է գիտական խորհրդատու յանձնախումբ մը, որ պէտք է որոշէ, թէ այդ գուժամարը ինչ ձեւով պիտի ծախսէ:

Նախագահ Ճորժ Պուշի վարչակարգը մեծ գուժամարներ յատկացուցած է կենսաախաբեկչութեան հակամիջոցառումներու մշակումին: Անիկա կազմած է գիտական խորհրդատու յանձնախումբ մը, որ պէտք է որոշէ, թէ այդ գուժամարը ինչ ձեւով պիտի ծախսէ:

